

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 161 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1 օգոստոսի 2013 թ.
N 825-Ն

Հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի ապրիլի 11-ի «Հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերն ըստ ընթացիկ և կապիտալ բնույթի տարբերակելու հայտանիշները և չափերը սահմանելու մասին» N 161 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) առաջին պարբերությունից հանել «օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող համարվող հարկատուների» բառերը.

2) «ա» կետը «կատարված ծախսերի» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն որոշման «գ» կետում նշված սպասարկման ծախսերի)» բառերով.

3) «բ» կետը «կատարված ծախսերը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն որոշման «գ» կետում նշված սպասարկման ծախսերի)» բառերով.

4) «բ» կետից հետո որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «գ» կետով.

«գ) հիմնական միջոցների վրա կատարված՝ դրանց շահագործման ապահովման համար անհրաժեշտ ծախսերը համարվում են սպասարկման ծախսեր:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, և դրա գործողությունը տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

5 օգոստոսի 2013 թ.
Երևան